

«Կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/3

7 մայիսի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 16.04.2013թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Սերգեյ Հայրապետյանի 27.03.2013թ. դիմումը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 12.04.2013թ. թիվ 2122277 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ա/Ձ Սերգեյ Հայրապետյանի դիմումում մասնավորապես նշված է.

ս.թ. մարտի 25-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, Բագրատունյաց 10/69 հասցեում գտնվող «Ոսկե դար» առևտրի սրահ մտավ բարձրահասակ մի քաղաքացի և պահանջեց երկու զույգ տղամարդու գուլպա (մեկը 1000 դրամանոց, մյուսը 2000 դրամանոց): Նա վճարեց քսան հազարանոց թղթադրամ: Ես ՀԴՄ-ով անցկացրեցի երեք հազար դրամ վաճառքի գումարը և գնորդին վերադարձրի 17.000 դրամը: Երկու զույգ գուլպաները փաթեթավորելով՝ ՀԴՄ-ի կտրոնի հետ տվեցի գնորդին: Գնորդը գնաց դեպի ելքի դուռը, իսկ ես, հեռանալով դրամարկղի մոտից, սրահի մի անկյունում սկսեցի տեսակավորել նոր ստացած ապրանքները: Այդ ժամանակ սրահ մտան մի քանի երիտասարդներ, որոնք Շենգավիթի ՀՏ աշխատակիցներն էին: Նրանք ասացին, որ կատարել են հսկիչ գնում: Այդ ընթացքում պարզվեց, որ գնորդը հարկային տեսուչ Արսեն Ալեքսանյանն է եղել: Նրանք ինձ ասացին, որ երկրորդ գնման ժամանակ ես վաճառել եմ գնորդին ևս մեկ զույգ 2000 դրամանոց գուլպա և ստացել եմ 2000 դրամը, որի համար ՀԴՄ-ի կտրոն չեմ տրամադրել: Ես հասկացա, որ Ա.Ալեքսանյանը վաճառքի դիմաց կտրոնը ստանալուց հետո ցանկացել է ամեն գնով սարքել վաճառք, որի դիմաց ես ՀԴՄ-ի կտրոն չեմ տրամադրել: Օգտվելով իմ զբաղվածությունից՝ նա ցուցափեղկից վերցրել է մեկ զույգ 2000 դրամանոց գուլպա և դրամարկղի սեղանին դնելով 2000 դրամը՝ դուրս է եկել սրահից: Ա.Ալեքսանյանի գործողություններին ներկա է եղել Ա/Ձ-ի աշխատակից Մանուկ Գասպարյանը: Ես հարկային տեսչության աշխատակիցներին ասացի, որ անհարմար է, նման ձևով խախտում չեն արձանագրում:

Առևտրի բնագավառում աշխատում եմ շուրջ 25 տարի և երբեք նման անհեթեթություն չեմ տեսել: Զանգահարեցի Պետեկամուտների կոմիտեի թեժ գիծ, որտեղից ինձ ասացին, որ կարող եմ տեսուչների անօրինական գործողությունները բողոքարկել:

Նման անօրինական գործողությունների համար ես հրաժարվեցի ստորագրել տեսուչների կողմից կազմված ակտը և ասացի, որ կբողոքեմ կատարված մտացածին գործողությունների դեմ:

Հույսով եմ, որ նման ձևով կազմված ակտը կքննարկվի և կտրվի արդար լուծում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Սերգեյ Հայրապետյանի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ դիմումով բերված բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 19.03.2013թ. թիվ 2211162 հանձնարարագրի Ա/Ձ Սերգեյ Հայրապետյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 26.03.2013թ-ին կազմվել է թիվ 2211162 արձանագրությունը, որով մասնավորապես արձանագրվել է.

հարկային տեսուչ Արսեն Ալեքսանյանի կողմից 25.03.2013թ-ին ժամը 12:00-ին ք.Երևան, Բագրատունյաց 10/69 հասցեում գտնվող խանութից կատարվեց հսկիչ գնում 2000 դրամի

չափով՝ 1 զույգ կիսագուլպա, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Սերգեյ Հայրապետյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և չտրամադրեց համապատասխան գումարի ՀԴՄ կտրոնը: Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 12:03-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ 3000 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 2000 դրամը, ժամը 12:05-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 12:05-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը: Գնված ապրանքները ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ետ վերադարձվեցին տնտեսվարող սուբյեկտին և ետ ստացվեց հսկիչ գնման գումարը:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն ՀՀ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 29.03.2013թ. թիվ 2122277 հանձնարարագրի Ա/Ձ Սերգեյ Հայրապետյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 12.04.2013թ-ին կազմվել է թիվ 2122277 ստուգման ակտը (այիուհետ նաև ստուգման ակտ), որի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտի մոտ ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 19.03.2013թ-ի թիվ 2211162 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված արձանագրությունը, որով արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը, և ղեկավարվելով ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի և <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ առաջադրվում է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ